

Արձանագրություն թիվ 1

2020 թվականի սեպտեմբերի 9-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 11^ա դասարանի ծնողական ժողովը: Ծնողական ժողովին ներկա էին բոլոր ծնողները, որը վարում էր Լ. Ազարյանը:

Օրակարգում՝

1. Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրությունը:
2. Համավարակի պայմաններում դասընթացի կազմակերպման և իրականացման գործընթացի հետ կապված անհրաժեշտ իրազեկում:
3. Ընթացիկ հարցեր /կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

1. Լսեցին.- Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրությունը:

Ելույթ ունեցավ դասուցի Լ. Ազարյանը՝ ներկայացնելով ծնողական խորհրդի ընտրության կարգը:

Առաջարկվեց նոր ուսումնական տարվա համար ձևավորել 11ա դասարանի ծնողական խորհուրդ՝ նախագահ՝ և չորս անդամ կազմով: Առաջարկվեց հինգ անդամների թեկնածություն.

1. Թորոյան Մարինա
2. Թադևոսյան Լիլիթ
3. Գալստյան Վերգինե
4. Բադալյան Նարինե
5. Սարգսյան Մանուշակ

Նախագահի թեկնածու առաջադրվեց Թորոյան Մարինան, որից հետո կատարվեց քվեարկություն: Ծնողական խորհրդի նախագահ ընտրվեց Թորոյան Մարինան:

Որոշեցին.

11ա դասարանում ձևավորել ծնողական խորհրդի հետևյալ կազմը.

1. Թորոյան Մարինա նախագահ/
2. Թադևոսյան Լիլիթ
3. Գալստյան Վերգինե
4. Բադալյան Նարինե
5. Սարգսյան Մանուշակ

2. Լսեցին.- Համավարակի պայմաններում դասընթացի կազմակերպման և իրականացման գործընթացի հետ կապված անհրաժեշտ իրազեկում:

Համավարակի պայմաններում դասընթացների կազմակերպման և իրականացման գործընթացի հետ կապված անհրաժեշտ տեղեկատվությունը: Դասղեկ Լ. Ազարյանը նշեց, որ համավարակի պայմաններում աշակերտները դպրոց են հաճախելու 3 օր: Նշվեց, որ դասարանը արդեն բաժանված է 2 խմբի, դասընթացը իրականացվելու է խմբերով:

Դասղեկը հավելեց նաև, որ համավարակի պայմաններում դասընթացների կազմակերպման և իրականացման գործընթացում անհրաժեշտ է հետևել սահմանված կանոններին/ դպրոց հաճախել դիմակով, պահպանել հեռավորություն, հաճախակի ախտահանել ձեռքերը, դասամիջոցների ժամանակ դասասենյակներից դուրս չգալ/:

Դասղեկը հորդորեց ծնողներին աջակցել դպրոցին՝ պարտադիր կրթությունն իրականացնելու, սովորողներին ուսուցման և դաստիարակության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու համար, ժամանակին վճարել դասագրքերի վարձավճարները:

Որոշեցին.

Օգնել դասղեկին, կազմակերպված իրականացնել դասագրքերի վարձավճարների հավաքագրումը: Լինել հետևողական աշակերտների հաճախումներին:

3.Լսեցին.- Ընթացիկ հարցեր /կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

Ելույթի ժամանակ դասղեկը նշեց նաև, որ դասերը սկսվելու են ժամը 9⁰⁰-ին, ավարտվելու են 13⁵⁵-ին(դասամիջոցները կրճատվել են): Ուսուցումը վեցօրյա է:

Դասղեկը հորդորեց ծնողներին հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ, հետևել, որ աշակերտները դպրոց հաճախեն ճիշտ ժամանակին, անհրաժեշտ պարագաներով, աշակերտավայել կեցվածքով: Պահպանեն հիգիենայի կանոնները:

Որոշեցին.

Առավել ուշադիր և հետևողական լինել, որ աշակերտները դպրոց հաճախեն աշակերտավայել կեցվածքով, լինեն կարգապահ, դասերին պատրաստ:

Մտղական խորհրդի նախագահ՝
Քարտուղար՝

 /Մ.Թորոյան/
 /Լ.Թադևոսյան/